Արձանագրություն 4

ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգով կրթական օբյեկտների (Ալավերդու Ստ. Շահումյանի անվան թիվ 5, Երևանի Հ. Գալստյանի անվան թիվ 83, Աշտարակի Ն. Սիսակյանի անվան թիվ 5 և Արմավիրի Ռ. Եղոյանի անվան թիվ 1 ավագ դպրոցների) հիմնանորոգման աշխատանքների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

04.08.2020թ.
ժ.15:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մասիս Աղայանց /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Հովսեփ Գրիգորյան /գնահատող/
Հասմիկ Տոնոյան /գնահատող/
Հարություն Մարտիրոսյան /բացող/
Խաչատուր Գևորգյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1 Բողոքարկման խորհրդի կողմից ընդունված որոշման և վերագնահատման գործընթացի մասին
(Մասիս Աղայանց)

1.1 Հիմք ընդունելով 03.08.2020թ www.gnumner.am կայքում հրապարակված ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 31.07.2020թ թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/84 որոշումը՝ վերանայել գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 12.3 ենթակետով «Ագարակ» ԲԲԸ-ի հայտը մերժելու և 13.3 ենթակետով 3-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին կայացված որոշումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Ագարակ» ԲԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 7.4.2 և 7.4.3 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.3 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել 2020թ օգոստոսի 6-ին, ժամը 15:30-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Մասիս Աղայանց /նախագահ/
---------- Հովսեփ Գրիգորյան
---------- Հասմիկ Տոնոյան
---------- Հարություն Մարտիրոսյան
---------- Խաչատուր Գևորգյան
---------- Արսեն Սողոմոնյան /քարտուղար/